# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ


Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան 1փող.թիվ
2, Հեռ. (094) 519030 , hatsavan.kotayk@mta.gov.am


ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

N 105
*03 մայիս 2019թ.*

Հարգելի պարոն մարզպետ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Հացավան համայնքի ղեկավարի 2019թվականի ապրիլի 29-ի թիվ 25-Ա և մայիսի 02-ի թիվ 26-Ա որոշումները:
Առդիր՝ 2 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Խաչատրյան*
*Հեռ./093-212366/*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
29 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 25-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի,շինությունների և ինքնակամ գրաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> 2002թվականի դեկտեմբերի 26-ի օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով,նկատի ունենալով այն հանգամանքը,որ Մուշեղ Հենրիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող 0.180 հա գյուղ.նշ.վարելահողի քարտեզագրման արդյունքում նրան պատկանող հողամասի մակերեսը կազմել է 0.18425 հա (07-041-105-003 կադաստրային ծածկագրով):
Քարտեզագրման արդյունքում ավել օգտագործվող 0.00425 հա մակերեսը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար:Այն ընդգրկված չէ <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումներ ցանկում,չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում,հնագիտական,պատմամշակությային հուշարձանների պահպանության գոտիներում,բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում և չի առաջացնում սերվիտուտ

*որոշում եմ*

1. Ճանաչել Մուշեղ Հենրիկի Սարգսյանի իրավունքը Հացավան համայնքում ըստ կադաստրային քարտեզագրման 07-041-105-003 ծածկագրով փաստացի օգտագործվող 0.18425 հա հողամասի նկատմամբ:
2. Որոշումը ներկայացնել ՀՀ ԱԳԿ միասնական ստորաբաժանմանը գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

2019 թ. ապրիլի 29
գ.Հացավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 26-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով՝

*որոշում եմ*

1. Հայրենական Մեծ Պատերազմի մասնակից,համայնքի բնակիչ՝Անդրանիկ Ռուբենի Գրիգորյանին ցուցաբերել՝30000 /երեսուն հազար/ դրամ միանվագ օգնություն:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Ա.Կարապետյանին վճարումն իրականացնել համայնքի բյուջեի համապատասխան հոդվածից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

2019թ. մայիսի 02
գ.Հացավան